



Այսօր Աթենքում մեկնարկում է ՌԱԿ համագումարը

Այսօր Հունաստանի մայրաքաղաքում կսկսվի Ռամկավար ազատական կուսակցության 22-րդ ընդհանուր ժողովը...

Քոչարյան-Ալիևի դեմ առ դեմ հանդիպում դեռևս չի կայացել

Ֆլորիդայի Քի Վեսթ քաղաքում ԼՂ հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցությունների մասին հայտնի է սույզ մեկ բան...

Նաիրի հունանյանը հրաժարվեց ցուցմունքից՝ սալ դասարանում

Ամրի 5-ին վերսկսված «Հոկտեմբերի 27-ի» ֆրեական գործով դատական նիստում մեծ է ցուցմունքներ տալու հրաժարումը...



Գերմանիայում հայ-թուրքական երկխոսություն չձափախվեց

Պարզապես գեղասպանության հարցում գերմանալեզու թուրք մտավորականների քննադատությունը քախվեցին Թուրքիայի պաշտոնական քննադատներին...

Ժողովուրդը ցանկություն էր հայտնի ցուցմունքներին նախադասարաններում համար, երկ ժամանակահատվածում...

Անազանգում են հայաստանի ֆերմերները

Նկատելի ունենալով հանրապետության անասնաբուժության ներկա ծանր վիճակը...

Հոլանդիայում «բարիգալսյան նվեր» են մատուցել Թուրքիայի նախագահին

Երեւան, 5 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆԴՐԵՆ: Հոլանդիայի Բարձրագույն դատարանը որոշում է ընդունել Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա մասին...

ՀՌԱԿ նորագիր անդամների երդմնառություն



Ռ. Մավիսակալյանը անդամատեղ հանձնելու ժամանակ

Այսօր Երևան կժամանի Ռուսիայի Պաշտպանության նախարարը

ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հրավերով ապրիլի 6-ին Ենոթյա Պաշտպանության նախարար Սիրյա Պասկուի գլխավորած Պաշտպանության նախարարի շտաբի ղեկավարները...

Կառավարության երեկվա նիստում մտադրված հարցերից հիմնականը վերաբերում էր ֆինանսներին: Ի սարքություն վերցնել սահմանները սովորական դարձած նախադեպ հասկացված գումարների կրճատման մասին ընդունվող որոշումների, այս անգամ դրանք վերաբերում էին նախկին դարձած մարմանը եւ ծախսված ֆինանսների վերականգնմանը: Այսպես այս անգամ ընթացում նախատեսվել է մարտի

դրամ, Տեղադրարկին դարձյալ էլեկտրաէներգիայի համար 3,6 մլն դրամ: Միջոցներ են հասկացվել նաեւ Գարեգին Նժդեհի ծննդյան 115-ամյակը նշելու համար: Երկրորդ կարեւոր հարցը, որի վերաբերյալ տեղեկություններ հաղորդեց ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը, սեփականաձեռնորման միջոցների վերականգնման մասին էր: Կառավարությունը երեկ հաստատել է, որ անցյալ տարվա ընթացում որոշակի նպաստակների

կոմբինացի 28 մլն դրամ գերավճարն ամբողջությամբ մարվել է: Թուրմենստանին ունեցած Հայաստանի դարձած վերաբերյալ հաղորդվեց, որ դեռ է մարվի մինչեւ 2005 թ-ը: Այդ ընթացում ներկայիս 12 մլն 750 հազար դոլար գումարը կդառնա 16 մլն դոլար: Ռուսաստանին Հայաստանի ունեցած դարձած վերաբերյալ բանակցություններ են ընթանում: Հայաստանում էներգիա արտադրող ձեռ-

ՎԱՍՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Առողջադատության դարձի մի մասը կմարվի

Իսկ սեփականաշնորհման ծախսված գումարը վերականգնվել է

առողջադատության բնագավառին դեռ վերջին ամիսներից դարձի մի մասը 3,4 մլրդ դրամ: Հիշեցնենք, որ ընդհանուր դարձի մասին հայտարարվել էր 5 մլրդ դրամ, հետագայում 2000 թ. ընթացում կուտակվել են լրացուցիչ դարձի: Սեր այն հարցին, թե ի վերջ ո՞րքան է ընդհանուր դարձի, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը պատասխանեց. «Այս դարձի դրույթները 8 մլրդ դրամ»: Դարձի մասին մասին, ինչպես նաեւ մոտ 4 մլրդ դրամ նպաստների դարձի մասին նախարարը խոստացավ կատարել այս արդի, եթե միջոցներ հայթայթվեն: Իսկ եթե ոչ, ապա դրանց վճարումը կնախատեսվի 2002 թ. բյուջեով: Ընդհանրապես, Վարդան Խաչատրյանը նշեց, որ ներկայումս ծանր ֆինանսական վիճակ գոյություն չունի: 2001 թ. առաջին եռամսյակում նախատեսված 42 մլրդ դրամի փոխարեն հավաքվել են 47 մլրդ դրամի եկամուտներ: Հարկերի գծով 35 մլրդ 580 մլն-ի փոխարեն հավաքվել է 35 մլրդ 640 մլն դրամ գումար: Դա հնարավորություն է սկսել, բացի առողջադատության համակարգի դարձի մասին, գումարներ տրամադրել մի քանի այլ նպատակների համար: Կառավարության որոշումը կույրերի միավորման վճարած ավելացված արժեքի հարկի փոխարեն կառավարությունն այս կազմակերպությանը հասկացրել է 27 մլն դրամ: Ջրվեժի արգելափակման ոռոգման եւ սղախած էլեկտրաէներգիայի դիմաց վճարելու համար հասկացվել է 5,5 մլն

համար ծախսված այդ գումարը 8 մլրդ 250 մլն դրամ, մարտի 27-ին վերականգնվել է: Այնուհետեւ, Վարդան Խաչատրյանը պատասխանեց լրագրողների մի շարք այլ հարցերի, որոնք դուրս էին կառավարության նիստի օրակարգից: Այս օրերին կրկին մտադրվող արտահանող ձեռնարկությունների գերավճարների վերադարձման հարցի վերաբերյալ նախարարը հայտնեց, որ հիմնական արտահանողներից «Մանես եւ Վալեսը» ունի ոչ թե 623 մլն, այլ 68 մլն դրամ, «Մախուր երկաթի գործարանը» ունի 60 մլն դրամ եւ ստանալի գումար, իսկ մինչ այդ գումարը եղել է 240 մլն դրամ, Չանգեզուրի ղղնձամուղիբեռնային

նարկություններից մեկի հիման վրա առաջարկված է ստեղծել համասեղ ձեռնարկություն: Դարձի դիմաց հայկական կողմը ռուսական կողմին կհարմարի առաջադրված ընկերության բաժնետոմսերը, ըստ Վարդան Խաչատրյանի, 40, 50 կամ 60 տոկոսը: Այն հարցին, թե հնարավոր է, որ մինչ ամերիկյան ընկերությունը դառնա Հայաստանի բաժնիչ ցանցերի սեփականատեր, ռուսական ընկերությունը դառնա Հրազդանի ՋԷԿ-ի համասեղականատեր, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը բազմաձեռնակ պատասխանեց՝ ամեն ինչ հնարավոր է:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կունենանք 11-ամյա միջնակարգ կրթություն

Սոս 1 ամիս առաջ կառավարությունը մտադրվել էր կրթության եւ գիտության նախարարության ներկայացրած կրթության զարգացման ռեալական ծրագիրը, որի հիմնական նորությունն անցումն էր 11-ամյա միջնակարգ կրթությանը: Այդ ծրագիրը հիմնականում ընդունվել էր, սակայն գլխավոր հարցի՝ 11-ամյա դպրոցի վերաբերյալ որոշվել էր լրացուցիչ մտադրվում կատարել: Առաջարկվել էր հիմնավորել ուսումնական լուսնի փոփոխությունները եւ ֆինանսավորման խնդիրները: Անդրադառնալով այս հարցին, «Ազգը» ընդգծել էր նաեւ ուսուցչական կոլեկտիվների կարծիքն իմանալու անհրաժեշտ-

ությունը: Երեկվա նիստում կառավարությունը վերջնականապես հաստատել է 11-ամյա կրթության վերաբերյալ դրույթը, իսկ կրթության եւ գիտության նախարար Էդուարդ Դազարյանը լրագրողների հետ զրույցի ժամանակ նշեց, որ ուսուցիչները առաջարկություններ են արել, որոնք հազի էր առել նախարարությունը: Որքանով էր դա համապատասխանում իրականությանը՝ դժվար էր ասել: Իսկ ծրագիրը դեռեւս հավանության դեմ էր արժանանա Ազգային ժողովի կողմից, որտեղ դեմ էր ներկայացվի 1 քաղաք հետ:

Ա. Մ.

Ո՞վ է իրականում «Զերմոցային դարձաններում» ծխախոտ արտադրողը, թե՞ ներմուծողը

«2000 թվականին Աժ ընդունած «Ծխախոտի արտադրանքի հաստատված վճարների մասին» օրենքը սարքած էր դեռ վերջին ամիսը եւս բյուջեի դեմ», երեկ այս մասին հայտարարվեց «Գրանդ սոբալո» ՀՀ-ում: Ընկերությունը դեռ մեկ արի առաջ, երբ Աժ-ում մտադրվում էր վերոհիշյալ օրենքը, հայտարարել էր, որ առկա դրույթաչափերի փոփոխությունը (150 եւ 100 դոլար մեկ արկի համար ներմուծողի ու արտադրողի նկատմամբ) 100 եւ 80 դոլարի արտադրողի ու ներմուծողի կողմի լիակատար անհավասար դաշմաններում: Երկու օր առաջ «Գրանդ սոբալոյի» նախագահ Երան Կարանյանը ահազանգեցրել էր մի նամակ է հղել ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին: Երեկվա առույթում ներկայացվեցին երկու կարեւոր հարցադրում.

Ո՞ր է գնացել 25 մլն դոլարը

Պատահական վիճակագրության տվյալներով 1999 թվականին արտադրվել է մոտ 3,495 մլրդ հաշիկ սիգարետ, իսկ 2000 թվականին, արդեն հաստատված վճարների փոփոխությունից հետո, 2,098 մլրդ հաշիկ, այսինքն մոտ 1 մլրդ դոլար: Բանի որ հայաստանյան ռուսական սղախում էր տարեկան մոտ 5,5 մլրդ հաշիկ սիգարետ, դեմ էր ենթադրել, որ արտադրության ծավալների նվազումը դեմ էր կատարվել ներմուծման հաշիկ, այսինքն ավելանալու ներմուծումը: Մինչդեռ... 1999 թ.-ին Հայաստան է ներմուծվել մոտ 1,079 մլրդ հաշիկ սիգարետ, իսկ 2000 թ.-ին մոտ 1,03 մլրդ, այսինքն ներմուծումը դրույթաչափի մոտ 50 դոլար իջեցումից հետո անգամ ավելացել է ընդամենը 22 արկով: Ասացվում է, որ սկսված փոփոխությունն մոտ 1,5 մլրդ հաշիկ կամ 150 հազ. արկով, իրացման ռուսական չի երեւում: Հաստատված հարկով դա կազմում է մոտ 25 մլն դոլար: Այստեղից էլ մի տրամաբանական հարց ու՞ր է կորել 25 մլն դոլարը կամ ո՞ւմ գրառվել է սոցեթը: «Գրանդ սոբալոն» հասցեատերեր չի նշում դա

բաղոյի» մյուս հարցադրումը, երբ արտադրող սիգարետների նկատմամբ կա ակցիզային դրույթների տարբերակում (չորս տեսակի), ապա ներմուծվող սիգարետների նկատմամբ դա բացակայում է՝ չկա. թե՞ ֆիլտրով եւ թե՞ առանց ֆիլտրի ներմուծվող սիգարետները դրույթաչափով են միեւնույն միջով: Այստեղից էլ դառնալիս դառնալիս մի հարց՝ ի՞նչ հետադարձ նպաստ ունեն 9, Արզումանյանի «առողջարարությունը», եւ ինչու՞ են ներմուծողները հայտնվել առավել բարեկեցիկ դաշմաններում:

Բյուջեի մուտքերն ավելացել են ոչ թե ներմուծողի, այլ սղախողի հաշիկին


Վերջին մի քանի ամսում վերոհիշյալ օրենքի կենսահայրերի, լոբբիստների, հայտնի դաշմանակների ու նրանցից սնուցվող լրացվածիցներով գովերգվում է, որ բյուջեի մուտքերը վերոհիշյալ օրենքի կիրառման արդյունքում ավելացել են 9 մլն դոլարով: Եթե ներմուծման ծավալները չեն աճել, ուրեմն դարձից էլ դարձ է, որ այդ գումարը բյուջե է մուտքագրվել բացառապես սղախողի հաշիկին: Այստեղից էլ եզրակացու-



րողներով մեծությամբ, ինչպես նաեւ դեռ վերջին ամիսներից «մեկ այլ, ժողովրդի աչի առաջ բացահայտել կատարած թվային առողջարարությունը», երբ մեկ արի առաջ Աժ-ում բոլորի աչի առաջ ՀՀ ֆինանսների փոխնախարար Գագիկ Արզումանյանը, որն ըստ էության կենսահայր էր վերոհիշյալ օրենքի, «օրը ցերեկով խաբեց Աժ դաշմանակներին»:

բյուջե, 9 մլրդ-ը վերոհիշյալ օրենքի «փայլուն» արդյունքը կամ դեռ վերջին ամիսներից նախարարության «փայլուն աշխատանքի արդյունքը չէ (իրականում մասնատեղեկությունը, ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, օրենքի ընդունումից հետո ավելի է սկսել «ծաղկել»): Վերոհիշյալ անհերքելի փաստարկներից հետո «Գրանդ սոբալոյին» մնում է հայտարարել, որ դաշմանակները ու դրույթաչափերի փոփոխման համար: Իրեն սեղական արտադրող այս ընկերությունն արդեն իսկ կանգնած է խնդրի առաջ, տեղեկացվեց, որ բոլոր ուղղություններով ընկերությունը կրել ու կրում է մոտ 50 տոկոսի վնաս: «Գրանդ սոբալոն» ողորդում է ու դաշմանակները հստակ ու եական արտադրողի ու ներմուծողի նկատմամբ, հաշիկի առեւտրով այն հանգամանքից, որ արտադրողն է առաջին հերթին այս երկրի հարկատու, արտադրողն է ստեղծում աշխատատեղեր, կայացնում ինստիտուցիաներ ու վերականգնում ենք-ստության մեծած ոլորտները, ինչպես օրինակ ծխախոտագործությունը, որի շնորհիվ աշխատատեղ է ստացել մոտ 15 հազար գյուղացի: Կարճ ասած՝ սեղական արտադրողն ուզում է ոչ թե «զերմոցային դաշմանակներ», ինչպես այլ հավասար աշխատանքային դաշմանակներ ու իր աշխատանքին ու ներդրումներին համարժեք վերաբերում: Վերոհիշյալ դրույթաչափերի փոփոխությունը ցույց կտա ընդհանրապես մեծությամբ վերաբերումն իր արտադրողի նկատմամբ, եւ կարող այն կարեւոր հարցը, թե ո՞րն է Հայաստանի համար առաջնայինը՝ սեղական արտադրության զարգացումը, թե՞ ներմուծումը:

ԳԱՅԱՆ Ե ՄՈՒՐՈՅԱՆ



ST GRAND tobacco

Նախի հունանյարը հրաժարվեց ցուցմունք սալ դասարանում

Սկզբը էջ 1

Ամբասանյալը դասավորին խնդրեց նաեւ իրեն սրամարդել 33 սոցիալ-սենսուական վիճակագրական տեղեկագիր եւ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից հրատարակվող 99 եւ 2000 թթ. Ազգային զարգացման զեկույցների օրինակները: «Դրանք անհրաժեշտ են իմ գործողությունները հիմնավորելու եւ դասադասվելու համար», հայտնեց Ն. Հունանյարը: Դասավոր Ս. Ուզունյանն առաջարկեց խնդրանքը միջնորդության ձեւով ներկայացնել, որից հետո կհնարվեն:

Դասավորության մասնակից կողմերը մի քանի անհաջող փորձեր արեցին ամբասանյալի ցուցմունքներից հրաժարվելու դասադասները դարգելու համար: «Ցուցմունքից հրաժարվում է, գուցե հարցերին կդասասխատանք, մեղադրող կողմի հարցարանները ամբասանյալը կսրակ հայտարարեց «այս դասին չեմ դասասխատանում»: Նրա հայտարարությունը որակվեց դասավորությունն անհարկի ծոծոկները փորձելու համարձայնությամբ դասարանը որոշեց հրադարակել Նախի Հունանյարի նախաձեռնական ցուցմունքները: Մինչ այդ դասավորը կեսժամյա ընդմիջում էր հայտարարել Ն. Հունանյարի ցուցմունքների ժամանակ ամբասանյալների մի խմբին դադարեցնելու հրադարակելու հարցին: Այս որոշումը դասարանը կայացրեց եւ փաստաբան Տ. Ջանոյանի միջնորդության հիման վրա, մինչեւ դասավորությունը ընդմիջելը փեռվար անսին, այս գործի բացառիկ նշանակությունը նկատի ունենալով: Երբ Ն. Հունանյարը հրաժարվեց ցուցմունքից, դասավորը կրկին ընդմիջեց դասական միսը դադարեցնելու համար: «Իրեն կակածայ կարգադրված Ն. Հունանյարն իր կենսագրականը ներկայացնելուց հետո անցնում է լրագրողական եւ հասարակական գործունեությանը, նշելով, թե 33-ից հեռացվել է իրեն անհայտ դասադասներով: Այնուհետեւ բացատրում է հոկտեմբերի 27-ին զինված Աժ մտնելու եւ սպանություններն իրագործելու որոշման ծանուցումը: Պատմում է, որ 88 թ.-ից դեկավարելով ուսանողական շարժումը, սեռավ, թե ինչպես հեռացա Տաիսիանի այլատրվեց շարժումը: «Այդ ամենի զուլվագործող հանդիսացավ 96 թ. նախագահական ընտրությունը, երբ Վազգեն Սարգսյանը զենի ուժով ժողովրդի գլխին փաթաթեց նշանակված նախագահին: Հետեւանք ընչազուրկների բանակն էր, կոչիկ ու դասագիր չունեցող երեխաները եւ այլն»:

Շարունակելով իր կատարած բայի հիմնավորումները, ամբասանյալը հայտնում է «Ես ընթացազե եմ Վազգեն Սարգսյանի կողմից բռնադատմանը եւ կոռուպցիայի վարչակարգի դեմ: Հայաստանում եմ, որ Վ. Սարգսյանը ին է ժողովրդի սահմանադրական իրավունքի վրա բռնաճարակ, ուժի եւ զենի մեթոդով խախտել է ազատ ընտրության իրավունքը»: Շարունակելով իր սեականեով հայ ժողովրդի բավառության դասադասներին փակառույթանքը, Ն. Հունանյարը հայտարարեց, որ իր փնակիցները մինչեւ հոկտեմբերի 27-ն անտեղյակ էին նախադասաւելի գործողություններին եւ նրանց այդ մասին հայտնել է Աժ զեալու ծանուդարիին, մեհենայի մեջ, հանդգելով, որ այրու-նահեղությունը չի լինելու, օդ են կարկելու վախեցնելու նդասակով եւ ուղիղ եթեր են դահանդելու վաշաթե-սի հրաժարականը հրադարակելու համար: Մի քանի օր հետո անդադարեցնելով նույն փաստը, ավելի անուր-մասնում է եւ հայտնում, որ զեններն վելի վաղ էին հայթայթել եւ Աժ մտնելն ամենեւին էլ հանդարատեցից բայլ չէր, ինչպես հայտնել էր սկզբում: Ն. Հունանյարի նախաձեռնական ցուցմունքների համաձայն, ընկերներն Աժ սանելու հարցում վճռորոշ է եղել այրուն չթափելու նախնական համաձայնությունը: Սակայն Աժ մտնելուց հետո «փոխհաճություն է եղել, որից հոգեկան խռով եմ աղբել եւ անկաճիստեստելի կրակոցներ արծակել: Ես ուզում էի կոչ անել ժողովրդին, որ հավակնել եւ այրունահեղություն չլինի: Պատգամավորեցի շարեհին խնդրել եմ, որ կապվեն իրեն կուսակցությունների հետ եւ զան Աժ իրավիճակը կարգավորելու համար»:

Հրադարակվեցին նաեւ այն ցուցմունքները, որոնց ամբասանյալն առաջին մեղադրանքներն է ուղղել ֆաղաական գործիչներին եւ դասադասավորներին Սամվել Բաբայան, Հրան Սարգսյան, Հայկ Բարոյանյան, Մուրեղ Մովսիսյան եւ այլն, որոնց տեղեկացվածության վերաբերյալ տարբեր վարկածներ է առաջ ֆառում: Երկվա դասական ճիստն ներկա չէին փաստաբաններ Տիգրան եւ Մարիեն Ջանոյանները: Սակայն կողմերը համաձայնեցին նրանց մասնակցությունը բարոյական ճիստն ներկա չելու հարցում: Փաստաբանների տեղեկությունների համաձայն, նրանք կմասնակցեն այսօրվա դասական ճիստին:

ԼՂՀ նախագահ Արկարի Ղուկասյանն աներիկյան «Լոս Անջելես քայմս» քերթին սված հարցազրույցում հույս է հայտնել, որ Ֆլորիդայի Քի Վեսթ ֆաղադում նախագահներ Քոչարյանի եւ Ալիեի բանակցությունները կհանգեն մի լուծման, որը հնարավորություն կտա Լեռնային Ղարաբաղին միավորվել Հայաստանի հետ, կամ ԼՂՀ-ն կծանալի անկախ ղեհություն: «Ցանկացած այլ ընտրություն նշանակում է, որ մենք շարժվում ենք ոչ թե դեպի խաղաղություն, այլ՝ դեպի սարգում», շեհեց է Ղուկասյանը, ընդսին նշելով, թե

սումները: Անդրադառնալով նախագահ Ղուկասյանի «Լոս Անջելես քայմսին» սված հարցազրույցի այն հասվածին, որտեղ ԼՂՀ առաջնորդն սասում է, թե «ԼՂ-ն կամ ղեհ է միանա Հայաստանին կամ ծանալի անկախ ղեհություն», սկն Սելվումյանը նշեց, որ անկախության հասնելու ծոցում կամ Հայաստանին միանալը նորություն չէ: Այդ դեպում ինչու էր դասոնական Սեփանակերցը որդե բանակցությունների հիմն ընդունելի համարել 1998 թ. եԱԿԿ ՄՆ առաջարկված «ընդհանուր ղեհություն» բանաձեղ: Իսկ միզուց

լում է, լավատես է, բանակցություններում հնարավոր համարում է «դիվանագիտական ծեղում»: «Պատգամներ են սղատել, որ լինելու է ինչ-որ առաջիակացում, ֆանի որ լավատեսությունը նաեւ մեր աշխատանքի մի մասն է: Սեն չափավոր լավատես ենք», ասաց ԼՂՀ առաջնորդն: Սկն Սելվումյանը, անդրադառնալով «ընդհանուր ղեհությունը», հիշեցրեց, որ «եթե ինչ-որ բան Բախում չի ընդունում, դա չի նշանակում, թե ընդունելի է Սեփանակերցի համար»: Հիշեցնելով, որ «ընդհանուր ղեհությունը» որդե

Ուժադրություն, խոսում է Սեփանակերցը

Արկարի Ղուկասյան. «Լեռնային Ղարաբաղը կամ պեհ է միանա Հայաստանին, կամ ծանալի անկախ պեհություն»

իր զզացողությամբ աղբեքանական կողմն «առավել ֆան երեկ հակված է ընդունելու իրատեսական դիրորոշում բոլոր հարցերում»: ԼՂՀ նախագահը վստահություն է արտահայտել 33 նախագահ Քոչարյանի հանդեղ, այսուհանդերձ ասելով, որ Սեփանակերցը իվեքայան բանակցություններում ուղղակի կողմ չի ներկայացված, հետեաբար կարող է մեծել այն բոլոր առաջարկները, որոնք կորոշեն բանակցությունների մասնակիցները:

Երկ հարցազրույց է սվել նաեւ ԼՂՀ առաջնորդնախարար Նախար Սելվումյանը՝ աղբեքանական ԱՄՏ գործակալությունը: Նախարարը նշել է, ինքը Քի Վեսթի բանակցություններից սղատելիներ չունի, ֆանի որ այնտեղ ներկայացված չէ Սեփանակերցը: Քի Վեսթի բանակցությունները Հայաստան-Աղբեքան բանակցային գործընթացում կարեւոր փուլ են, եւ ԼՂ հարցում վերնական որոշում կարող է կայացվել միայն ԼՂ մասնակցության դեղում: Սեփանակերցի բացակայությունը Քի Վեսթի բանակցություններում արդյուն է Աղբեքանի նախագահի ցանկությունը, որը չի ուզում իր համար հավելյալ որոշելներ ստեղծել, նշել է սկն Սելվումյանը, հույս հայտնելով, որ Հայաստանի նախագահը չի ստարգրի ոչ արժանաղաշիվ որեւ համաձայնագիր: «Միջնորդները հասում են, որ հակամարտության կողմեր են Բախում, երեանք եւ Սեփանակերցը: Նրանք ուժադրություն են հրավիրում այն իրողությանը, որ առանց ԼՂ ղեկավարության համաձայնության որեւ որոշում չի ընդունվի», ասել է ԼՂՀ առաջնորդնախարարը:

«Ազգի» հետ ունեցած հեռախոսազրույցում երկ սկն Սելվումյանը շեհեց, որ ԼՂ իշխանությունները չեն հրաժարվել անկախության ձգ



«ընդհանուր ղեհություն» բանաձեղ նշանակում է ԼՂՀ անկախության ծանալում, ինչպես մի ֆան անգամ կրկնել է Աղբեքանի նախագահը: Սկն Սելվումյանը հիշեցրեց, որ Սեփանակերցն ընդունել է «ընդհանուր ղեհություն» գաղափարը եւ եԱԿԿ Մինսկի խմբի համանախագահությունը իրատեսական ձեղ: «ԼՂՀ ղեկավարությունը «ընդհանուր ղեհություն» գաղափարը ընկալում է որդե կողմերի իրավահավասար իրավական օրյեկներ հանդիսանալու ամբարգում»: «Սեն «ընդհանուր ղեհությունը» ղեկանագիտական «այո» են ասել, մենք ընդունում ենք գաղափարը, նշեց սկն Սելվումյանը, հասկացնելով, որ Սեփանակերցի դասասխանը եԱԿԿ ՄՆ համանախագահությանն ավելի շուտ մոտ է «ոչ»-ին:

Ետում են մնացել Քի Վեսթի բանակցությունների երկու օրերը: Դրանք դադարում են խիստ գաղտնի: Այնուամենայնիվ, դարաբաղյան կողմն ինչ-որ առաջընթաց ակնկա

բանակցությունների հիմն ընդունել էին երեան ու Սեփանակերցը, Բախում մեծել էր:

ԼՂՀ նախագահի եւ առաջնորդնախարարի խոսուերից կարել է ներադրել, որ դասոնական Սեփանակերցն ինչ-որ տեղ նեղացած է այն առումով, որ ներգրավված չէ Քի Վեսթում ընթացող բանակցություններում: Ինչ վերաբերում է Ա. Ղուկասյանի «...կամ անկախություն» մոտեցմանը, աղա, մեր կարծիքով, ԼՂՀ ցանկացած անկախություն վարչական նախկին սահմաններում անընդունելի է, ֆանգի այդ դեղումը բացակայում են ԼՂՀ անվճարության երախիները եւ վերականգնվում է անկախային վիճակը:

Իսկ հնարավոր է հակամարտության կողմերին առաջարկվի կարգավորման մի տարբերակ, որն ընդունելի լինի Սեփանակերցի համար, սակայն անընդունելի՝ երեանի համար: Արեւ այս հարցի շուրջ ես խորհել:

ԹԱԹՈՒՆ ՏՎՈՒՆՅԱՆ

Գերմանիայում հայ-թուրքական երկխոսություն չձավալվեց

Սկզբը էջ 1

Թուրքական «Հյուրիեթը» մարտի 26-ի համարում զայրույթով արծագանելով որոշեառի զեկուցմանը, տղերիս հեղինակին մեղադրեց Թուրքիայի դեմ աներեւակայելի հերյուրաններ տարածելու մեջ: Ըստ «Հյուրիեթի»՝ «հայկական ղեհությունը ֆայլայելու Հայաստանի նկատմամբ ոսգնական սղատալիի դիմելու եւ նրան քշափակման ենթարկելու» Թուրքիայի հակահայկական ֆաղաականության դրտուրումների մասին մեր տեսակետերը հերյուրան էին: Թեեւ Գերմանիայում Հայաստանի դեղադան Անոս Ոսկանյանն ինձ «Հյուրիեթի» նման հերյուրանի մեջ չնեղարեց, բայց իմ զեկուցման առնչությամբ արտահայտեց իր բացասական կարծիքը:

Հայ-թուրքական երկխոսության դարազային կարեւորն, ինչ խոսք, Ոսկանյանի կարծիք չէ, այլ միջոցառմանը նրա մասնակցությունը: Ակնհայտ է, որ կողմերից մեկի դեղադանի բացակայությամբ, երբ մյուսինը մասնակցում է, աղա մասնակցողն ինքնաբերաբար կարեւորում է այդ երկխոսության նշանակությունը իր երկրի համար: Միջոցառմանը Թուրքիայի դեղադանը չէր մասնակցում: Մինչդեռ Ոսկանյանը ոչ

միայն մասնակցեց, այլեւ երեւ օր օրեանեց այդ նույն շեղում, որտեղ 11 զեկուցողների հետ օրեանում էին մի ֆանի տանյակ ունեղիրներ՝ հրավիրվածի կարգավիճակով: Համայն մարդիկ հարցնում էին, թե ինչ դեղադան այստեղ ինչ է անում: Իմ եղուրից հետո դարգվեց, որ դեղադան Ոսկանյանն այդ օրերի ընթացումը դասասվում էր տեղեկատվական դիրերից ինձ խել սովորեցնել:

Մյուսիայում հայ-թուրքական երկխոսություն որդե այդդիսին չկայացավ: Այլ կերպ չէր էլ կարող, որովհետեւ միջոցառմանը զեկուցողի կարգավիճակով հրավիրված էին ԱՄՆ-ից երե մասնակից, երեին էլ մեր հայրենակիցներն են, նույնֆան Թուրքիայից, իսկ Հայաստանից՝ ընդամենը մեկը: Այս ամենի վրա եթե գումարելու լինենք այն գերմանաբնակ երե թուրք մասվորականներին, նաեւ միջոցառման կազմակերպիչներին, որոնք թվում էր Գերմանահայկական ընկերակցության նախագահ դոկտ. Բաֆֆի Ջանոյանը, կարծում եմ դասկերն ամբողջական կդառնա:

Բայց, ինչպես ժողովուրդն է առում կղա չարիք առանց բարիքի: Թուրքական մասնուի, Թուրքիայից ղեկավարող

կազմակերպությունների հակազդեղության, ինչպես նաեւ ավեառանչական ակաղեմիայի դիմաց կազմակերպված թուրքերի բողոքի ցույցի դայմաններում Հայոց ցեղատղությունը հարցը լայն արծագան գտավ ոչ միայն Գերմանիայում բնակվող թուրքաղապանների, այլեւ՝ գերմանացիների քշանում: Թաւեր Ալյամին եւ սկն էլ չլին Զյուրաթ Ալիեցին հասցեագրված սղատալիները նղատեցին դրա ծավալմանը: Հայոց ցեղատղությունը միջազգային ծանալման ներկա փուլում վերոհիշյալ արծագանը նկատելի տեղաւարտ է:

«Հյուրիեթը» միջոցառմանն անդրադառնալով «Երկխոսության ծուղակ» խորագրով, Հայոց ցեղատղությունը հարցում հայկական թեղերը հիմնավորելու մեջ որդե գլխավոր դերակատար, սղատալով մասնաղույց արեց Ալյամին, աղա սկսեց հարծակուններ գործել Զյուրաթի վրա: Հասկանալի է, որ եթե Ալյամին սղատալիի թիւրայն էր դարձել «Թուրքիան ինչու է լուծում» խորագրով զեկուցման համար դահանդելով անհատաղ ծանալել Հայոց ցեղատղությունը, աղա սկն Զյուրաթը հարծակուն ենթարկվեց հետեյալ խոսուերի համար.

«Ցեղատղությունը ղեհական հանցան է: Նաղիսները հրեաների հետ ինչ-որ կատարել են, աղա Անատիայում էլ հայրերի հետ է կատարվել: Ակնհայտ է, որ թուրքական ղեհությունը ծրագրված ցեղատղություն է իրագործել: Թուրքիան չի կարող խոսափել այդ մեղադրանքից»:

Թեեւ «Հյուրիեթը» քշանցեց Ողղվան Ալարին, սակայն ոչ դակաս տղավորիչ էր նրա զեկուցումը, նա անդրադարձավ ազգային փորձամասնությունների նկատմամբ թուրքական իշխանությունների ֆաղաականությանը, ցույց սվեց, որ դրա հիմնում ընկած են իթրիհասականների ֆաղաականության հիմնաղույթները եւ դա առ այսօր անփոփոխ շարունակվում է գործարկել երկում բնակվող Բիսոնյաների, այդ թվում ոչ թուրք երեկ խմբավորումների դեմ:

Այսուիսի եղուրների աղեղության սակ միանգամայն տարաբանական է, որ ավեառանչական ակաղեմիայի նիստերի դահիլում ոչ թե հայ-թուրքական երկխոսությունը ծավալվե, այլ թուրքական դասոնական տեսակետերը բաղվեին Ալյամի, Զյուրաթի, Ալարի, ինչու չէ, նաեւ Աղանդի տեսակետերին: Այս քախումը փաստերն ծա

խողեց միջոցառման ընթացում Հայոց ցեղատղության հարցը վիճարկման առարկա դարձնելու որոշք: Հալի Բերքայի մտահաղումները: Դրա հետ սահմանափակվեցին նաեւ հայ-թուրքական երկխոսությունը Թուրքիայի մտավորականների հետ աներիկաղա մեր հայրենակիցների երկխոսության սահմանափակելու ւաղադրիկ ուժերի հնարավորությունը:

Բանի դեմ Թուրքիան չի հրաժարվել իր հակահայկական դիրորոշումից, Հայոց ցեղատղությունը չի ծանալել եւ չի դաղարում երկխոսությունը ծաղայեցնել ցեղատղության բանաձեղերի չեղաֆացման նղատակին, Հայաստանը չղեկ է նրա հետ երկխոսության մեջ մտնել: Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Թուրքիայի մտավորականներին, աղա նրանք նախ ղեհ է ծեղեն երկխոսության օրակարգը, իսկ համաձայնության զայու դեղումը ջան գործարդեն աղաողվելու համար դրա ծավալումն իրեց նախաձեղությունը: Ի վերջո, Հայոց ցեղատղությունը որդե դասական ծեղառությունը ենթակա է վիճարկման, իսկ երկխոսությունը հետեաններն անխոսափելիորեն անդրադառնում են Հայաստանի եւ Թուրքիայի վրա:

Շահան Արծրունին մեկնաբանում է Տավերժի սուրբիցների առիթներով

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադրման 95-ի ՀԲԸՄ-ի Հայ երիտասարդաց ընկերակցության 70-րդ տարեդարձերի առիթներով Բեյրութի ՀԵԸ-ի «Անդրանիկ» մշակութային մարմինը 2001 թ. ծրագրել է մի շարք միջոցառումներ: Ինչպես Լիբանանից հայտնում է Սիմոն Մայան-Փայանյանը, դրանցից առաջինը ամերիկահայ ծանայված դաճնակահար Շահան Արծրունու համերգն է ՀԲԸՄ «Տեմիրժեան Կեդրոնի» սրահում մարտի 1-ին եւ 2-ին:



Իր առաջին համերգը սկսելով ելույթանքի «Տեմիրժեան աղթով», Շահան Արծրունին այնուհետեւ ներկայացրեց հայ երաժշտության զոհարները հայաստանից, Կոմիտասից, Սիրզոյանից, Գարամանուկից, Թերզյանից, Բաբաջանյանից: Անուշու, Կասարունները բարձր որակի էին: Մասկան առավել զնախաճել է, որ իր այս (եւ ոչ միայն այս) համերգների ժամանակ սաղաղակվող երաժիշտը ներկայացրեց ստեղծագործություններ ու հեղինակներին:

Անուշու, զանազանազան երաժիշտներ կան, որոնք բնավ մեկնաբանությունների չեն դիմում: Շահան Արծրունին այն բացառիկներից է, որ կարողանում է ոչ միայն վարդերան կասարել երաժշտական գործը, այլև մեկնաբանել: Ըստ Շահան Արծրունու, Արամ հայաստանը «հայ ժողովրդի

դեպտանն է մշակութային աշխարհում», իսկ Կոմիտասի մասին խոսելով, ասաց, որ «երգ շինվածի քերական առնելով կարգավորում, բյուրեղացում եւ որդես սրբազան մատուցել երաժշտական հանձնարել տղանով էր ներկայացնում»:

Երկրորդ համերգի ժամանակ Շահան Արծրունին ներկայացրեց Շոպենի, Բեթհովենի եւ արեւմտաեվրոպական այլ կոմպոզիտորների ստեղծագործություններից:

Շահան Արծրունու ելույթը համերգներն էլ անցան մեծ հաջողությամբ:

Ս. Գ.

«Տավերժի ճամփորդը» կալանավայրերում

Ասունեոգ Ջիվան Սարգսյանը շուրջ մեկ ամիս, սեփական նախաձեռնությամբ, «Հավերժի ճամփորդը» մեկնաներկայացմամբ հանդես եկավ Հայաստանի բոլոր կալանավայրերում: ՆԳ նախարարության բույլավայրում՝ նա գրական-գեղարվեստական իր կոմպոզիցիան ներկայացրեց նախ Կանադայի Բիլ 3 Բնակարանի մեկուսարանում, ապա շրջեց Արթիկի, Գյումրիի, Կոչի, Գորիսի եւ մյուս կալանավայրերում՝ յուրաքանչյուր այդ հյուրախաղերն ավարտելով երեւանի Բիլ 15 ուղղիչ աշխատանքային հիմնարկությունում: Ընդունելությունը ամենուր քեր էր: Առավել քան քեր էր մարտի 8-ին Արվյանի կանանց եւ

անչափահասների զաղուրում կասարված ընդունելությունը, ուր, ասունեոց առաջ, Ջ. Սարգսյանը ծաղիկներ սմիլեց զաղուրի բոլոր կանանց: Ի դեպ քանի որ նա «Հավերժի ճամփորդը» նվիրում է Հայաստանում Բիլսոններից ընդունման 1700-ամյա կին, ելույթներից առաջ Սուրբ Էջմիածնից վերցրած մոմերը վառում էր կալանավորների դասարանում փոխանցելու նպատակով: (Հիշեցնենք փեթվարին նա հանդես եկավ Գեորգյան ծեմարանում՝ արժանանալով քեր ընդունելության):

ՄԱՆԱԿԵ ՄԵԿՈՅԱՆ

Մահացավ Չոն Ֆիլիպսը

Երկու շաբաթ առաջ Լոս Անջելեսի հիվանդանոցներից մեկում 65 տարեկան մահացավ Չոն Ֆիլիպսը՝ «Mamas and Papas» խմբի հիմնադիրն ու երգահանը: Վերջին ամիսներին Ֆիլիպսը վատառողջ էր, հիմնականում քառաթիվ էր ստամոքսային ինֆեկցիայից, որը դժվարացնում էր մարտոդրությունը եւ մյուս օրգանների գործունեությունը: Նախորդ տարիներին նա մի քանի վիրահատություն էր արել, բայց փաստորեն արդարյուն:

Չոն Ֆիլիպսը հայտնի է ժամանակին մեծ մասսայականություն վայելած «Mamas and Papas» խմբից: Նրա հրատարակած երգերի ընդհանուր օրինակ՝ չինալ «California dreamin'»-ի, «Monday, Monday»-ի խումբն իր կարճատև գոյության ընթացքում բազմիցս նվաճել է հիփ-փոփերի բարձունքները: Մակայն նրա երաժշտական գործունեությունը դուր էր գալիս խմբի շրջանակներից: Ֆիլիպսին էր դասակարգում «Գրեյթֆուլ

դեյ» խմբի կասարմամբ դասական դարձած «Me and my uncle» երգը, Բիլ Բոյդի «Kokomo» հիթը, բազում համագործակցություններ Սիմոն և Ջեյմսի, Կիթ Ռիչարդսի եւ այլոց հետ, ստեղծագործություններ ֆիլմերի եւ Բրոդվեյյան բեմադրությունների համար...

Բացի դրանից նա ուներ նաեւ սոլո ալբոմներ եւ նոր էր վերադարձվել դրանցից վերջինը, որը կոչվում է «Slow starter» («Դանդաղ սկիզբ»), եւ ահա... այսօր սի ֆուր ավարտ: Մակայն մարդու կյանքը չի ավարտվում, այն արտանակվում է, եւ ոչ միայն նրա ստեղծագործություններով, այլ նաեւ նրա սերնդով: Չոն Ֆիլիպսն ունի սաղաղակվող օպերակներ՝ 3 աղջիկ (դերասանուհի Լեյկենզին, երգչուհի Չայան, որը 90-ականների սկզբին գերմասսայական Wilson Philips խմբի կազմում էր եւ երգչուհի-դերասանուհի Բիթմոն) 2 տղա (Ջեֆրին եւ Թեյմոն) եւ 2 խորք աղջիկ: ԶԱՐԻՆԵ ԴԱՐԱԳՈՒԼՅԱՆ

Հայաստանում բրիտանական մշակույթի «Cutting edges» շաբաթվա շրջանակներում սրված երկու համերգները նշանակալից են լոնդոնցի հորոյահար Մալոլմ Սեսիթերի մասնակցությամբ: Եվրոպայում փողային արվեստի հայտնի վարդեր, Անգլիայի առաջատար կամերային նվագախմբերի մշակական մեկնակասար Սեսիթերը նրա ստեղծ

են Շուբերտի «Ave Maria»-ն եւ Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի երկու համերգները: Շուբերտի մշակումը հայ փողահարների ոչ կուր կասարմամբ բնութագրվում էր անհամադրելի, փոխարենը հայաստանի «Օրորոցայինը» եւ «Լեզգիկան» առաջնություններ չհարուցեցին, քանի որ այստեղ դասական մեկնակասար Սեսիթերը լոնդոնցի

սեփական խաղի մեջ «Մեմբերելով» մեր նվագախմբի ողջ հնագանդ կոլեկտիվին: Իսկ եզրափակիչ մասը նա դարձրեց բացառապես բանաստեղծական, կարոտարար, ընդամենը օգտագործելով անտառային տեմային դանդաղումներ, որի ընդհանուր գրեթե հիմնուսելով սիմետրիկ զգալ հնչյունային շնչառության բույրը: Երկու համերգների առավել նշանակալի

Տորոյահար Մեսիթերը Հայաստանում պրեմիերա ներկայացրեց

այդ երկու համերգների տնական աշխուժությանը:

Որա հետ մեկտեղ, հազիվ թե կարելի է բավարար համարել Մեծ Բրիտանիայի երաժշտական մշակույթի այսօրվա համեստ ցուցադրումը: 1998 թ. առաջին «Բրիտանական շաբաթվա» ընթացքում իրականացվել էր հասկալից դասարանային մի քանի ծրագիր, այդ թվում Մեծ Բրիտանիայի ժամանակակից երաժշտության համերգ: Այս անգամ անգլիական երաժշտությունը ներկայացվեց միայն մեկ համերգում (Կամերային երաժշտության տուն, Հայաստանի դեսակական կամերային նվագախումբ, ղեկավար Արամ Դարբեկյան), այն էլ կազմելով ծրագրի հազիվ կեսը: Երկրորդ համերգում («Արամ Խաչատրյան» համերգասրահ, «Մեմբերելով» կամերային նվագախումբ, ղեկավար Էդուարդ Թոփչյան) Միացյալ Թագավորության երաժշտությունն առհասարակ բացակայում էր:



Մալոլմ Սեսիթերը «Բրիտանական շաբաթվա» միակ երաժիշտ էր, որը դարձավ Հայաստանում Ռալֆ Վոհան-Ուիլյամսի (ծնվ. 1944 թ.) Հորոյի եւ Լարային գործիքների կոնցերտի առաջին կասարման նախաձեռնողը: Ի դեպ, ծրագրային համերգացանկում նրա առաջին, հիմնական ազգանունը սխալմամբ գրված էր որդես անուն, իսկ իրական անունն առհասարակ չկար:

Նվալի ժողովուրդներին թվում, վերոհիշյալներից բացի, կուրցենայի նեյլ Է. Սիրզոյանի «Թեմա վարիացիաներով» գործի (1947) նվագախմբային փոխադրումը (բնօրինակում Լարային կվարտետ) եւ Պ. Չայկովսկու «Լարային նվագախմբի սերենադը»: Հայաստանի դեսակական կամերային նվագախումբը Միրզոյանի գործը նվագում էր կարծես իր զգացմունքների սահմազծի վրա, յուրաքանչյուր ֆրագի ծավալածի մեջ ներդնելով մարդկային հույզերի շարժումը: Տեմբրային առումով նվագախումբը հնչում էր չափազանց հարուստ, իսկ մեկնաբանման դարաբեկյանական հոնորական դասարանը ներդաճակորեն հետեւում էր հետաքննազգային ժամանակաշրջանի երաժշտության դասարանային:

Չայկովսկու «Մեմբերելով», որը մեկնակ է «Մեմբերելով» կամերային նվագախմբի նվագացանկում, այս անգամ հնչում էր մեծ դասիկի ճարտարում եւ չէր կորչում այնտեղ: Օգտվելով նվագախմբային դասարանից, լավ հաճվելուց զանգվածի հնարավորություններից, դիրիժորն աղաղակեց հնչելույթն մասսայականություն: Նկատելի էր նաեւ Թոփչյանի ցանկությունը՝ այդ ստեղծագործության մեկնաբանման մեջ ներդնել սիմֆոնիկի իր ձեւավորվող փորձը: Այսուհետ, թավջութակների խմբի հազգեվածությունը նման էր մեծ նվագախմբի արտահայտչականությանը:

Վերջապես Չայկովսկու չորս մասանոց «Մեմբերելով» մեկնաբանման բնորոշ գիծը դարձավ դրա եզրափակիչ մասը: Դիրիժորն հաջողվեց ճկունորեն ընդգծել ռուսական թեմայի մոտիվային զարգացումը հետագայում Ի. Ստրավինսկու համար բնորոշ դարձած սկզբունքով (օրինակ, «Պեթրուսկա» բալետում):

Գնի մեջ նորը տեսնելու կարողությունը միշտ էլ կարելու է: Իսկ դասական արդարության դասարանման համար դա դարձալիս անհրաժեշտ է:

ՄԱՆԱԿԵ ՄԵԿՈՅԱՆ Արվեստագիտության դոկտոր

Շաբաթվա, որ շաբաթվա կազմակերպիչները (ինչպես անգլիական, այնպես էլ հայկական կողմի) չեն ուզեցել օգտվել երեւանում ժամանակակից ստեղծագործություններ կասարելու հնարավորությունից, մանավանդ որ այսօրվա Մեծ Բրիտանիայում կան խոսք, աշխարհում ծանայված շաբաթվա կազմակերպիչներ: Ոչ ոք չի փորձել նախաձեռնությունը միշտ հանգեցնում է ֆուր աղյուսի (ցավով, Հայաստանում Բիլսոններից ընդունման 1700-ամյակի միջոցառումները եւս նման դիվերսիոնի կնիք են կրում):

Ներկայիս բազմաթիվ երաժիշտների նման Սեսիթերը չի սահմանափակվում միայն կասարողական գործունեությամբ: Նա զբաղվում է նաեւ նվագախմբային փոխադրումներով, որոնցում առաջին դասարանում առանձնացված են մեկնակասար փայտե-փողային գործիքները, բնականաբար հորոյը եւ ցեղակիցները:

Համերգի ժամանակ «Մեմբերելով» նվագախմբի, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի փողային խմբի եւ հարվածային գործիքների խմբի հետ Սեսիթերը ցուցադրեց իր մեկնակասարի մի քանիսը: Որանք

Մեմուել Բեմեթի «Մպասելով Գորոյին» ներկայացումը Հայաստանում

Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության հրավերով հունական բաժնեխմբերից մեկը Հայաստանում է: Հակոբ Պարոյանի անվան երաժշտական կոնցերտային թատրոնում տեղի ունեցավ մամուլի առույթ, որի ժամանակ մշակույթի փոխնախարար Կարեն Արիստակեսյանը ընդհանուր առմամբ հույս դրաասաններին եւ տեղեկացրեց, որ սա Հայաստանի եւ Հունաստանի մշակութային հարաբերությունների զարգացման եւ փոխանակման ծրագրի շրջանակում առաջին միջոցառումն է: Հաջորդ հայրը լինելու է մայիսի 7-17-ը երեւանում կազմակերպվելի հունական մշակույթի օրերի կազմակերպումը: Իսկ աճանը հայկական մշակույթի օրեր կկազմակերպվեն Հունաստանում, Հելլադա



կենտրոնում սարքեր երգախմբեր կոմիտասի փոխարեն, Ջիվան Գասարյանի, «Տաղարան» համույթի ելույթները տեղի կունենան Աթենի բեմում, կներկայացվի Փարաջանովի աշխատանքների ցուցահանդեսը, կցուցադրվար Դիմիտրիս Պիասարը վսահեցրեց, որ հայ դերասաններին մեծ սիրով բեմադարձակը կհամարվի Աթենի «Պոլեթիսոն» թատրոնում:

Վե՛ն ֆիլմեր: ՀԲԸՄ-ի նախագահ երվանդ Դազանյանը ողջունեց հյուրերին եւ նեց, որ քառնին դոնեը միշտ բաց են նրանց առջեւ: Մակայն շաբաթվա վերադարձում էր, որ հայկական մշակույթի օրերի ցանկում չկա որեւէ հայկական թատրոն: Մշակույթի փոխնախարարը խոսեցավ վերանայել ծրագիրը, իսկ հունական բաժնեական խմբի ղեկավար Դիմիտրիս Պիասարը վսահեցրեց, որ հայ դերասաններին մեծ սիրով բեմադարձակը կհամարվի Աթենի «Պոլեթիսոն» թատրոնում:

ԻՐԱՆԱ ԶԱՐԻՆԵ

ՁԱՐՄԱՆԱԿՈՒՄ ԿԱԶԵՐՈՎ



Մեր նկարիչ Գ. Յարայանը փորձում է համոզել, որ ինքը դասկերել է 1992-ի ձմեռը: Բայց այդպե՛ս է...

ՄԱՆԱԿԵ ՄԵԿՈՅԱՆ

Ապրիլի 6 Տայոց տնարի Մազդեդ օրը

- Մակար Առաջին Թեոդոսյան (1813 թ., Բիբլիսի վիլայեթ, Գ. Թեոդոս), 1885 թ. հայոց կաթողիկոս:
- Վանո (Հովհաննես) Մուրադելի (1908 թ., Վրաստան, Ի. Գորի), ԽՍՀՄ ժող. արհեստ, կոմպոզիտոր, հանրահայտ «Բուլետենվայրյան ահազանգ» երգի հեղինակը:
- Սոֆյա Խիսարովան (1908 թ., Թիֆլիս), գրող:
- Գաղիկ Սարգսյանը (1926 թ., Երևան), ՀՀ ԳԱ քրդ. աղյան, դաս. գիտ. դոկտոր, պրոֆ., արեւելագետ:

ՏՆՆՆՆՆՆՆ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԱՏ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

N	Չեմարկուրյան անվանումը	Հասցեն	Գործունեության տեսակը	Մասնավորեցման ձևը	Մասնավորեցվող գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	Մասնավորեցվող գույքի ակտիվ (% կամ հազ. դրամ)	Մասնավորեցվող բաժնետոմսերի քանակը	Պարտավորություններ (հազ. դրամ)	Տեղեկատվ. (ազդանգիր) հրատար.	Մասնավորեցման		Չբաղեցրած հողատարածություններ
										սկիզբը	ավարտը	
1	«Զվարթնոց» ՓԲԸ	Բ. Էջմիածին, Շրջանային 5	էլ. սար. արտադրություն	մրցույթ	51394	12849	51394	37276	02.03.01	02.03.01	10.04.01	1,2
2	«Անիտեմազ կոմբինատ» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, գ. Անիտեմազ	չինականության արտադրություն	մրցույթ	61116	30558	61116	1639	02.03.01	02.03.01	10.04.01	13
3	«Արթիկ հյուրանոց» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, Բ. Արթիկ Երկաթուղայինների 3	հյուրանոցային տղասարկում	մրցույթ	32156	8039	32156	42,5	02.03.01	02.03.01	13.04.01	0,14
4	«Վանաձոր հյուրանոց» ՊՓԲԸ	Լոռու մարզ, Բ. Վանաձոր Մաշտոցի 1	հյուրանոցային տղասարկում	մրցույթ	56025	14006	56025	29	02.03.01	02.03.01	13.04.01	0,275
5	«Մասիս» ՓԲԸ	Մարտի մարզ, Մասիս ավան, գ. Մայրաք. Երվան	չինականության արտադրություն	մրցույթ	48164	24082	48164	13912	02.03.01	02.03.01	17.04.01	9,62
6	«Լազուր» ՓԲԸ	Բ. Երևան, Մրցակուրյան 278	կենցաղային տեխնիկայի արտադրություն	մրցույթ	130992	32748	130992	52	02.03.01	02.03.01	27.04.01	1685,60
7	«Վայի բեռնաուղեուղ» ՊՓԲԸ	Վայոց Չորի մարզ, Բ. Վայ, Սելիխյան 3	բեռների և ուղեվորների փոխադրում	մրցույթ	63468	15867	63468	16902	02.03.01	02.03.01	17.04.01	2,445
8	«Արլամ» ՓԲԸ	Տավուշի մարզ, Բ. Բերդ	ռոզման ցանցերի կառուցում	մրցույթ	18519	4630	18519	2847	02.03.01	02.03.01	17.04.01	0,78
9	«Ճամբարակի բեռնաուղեուղ» ՊՓԲԸ	Բ. Ճամբարակ Թումանյան փ.	բեռների և ուղեվորների փոխադրում	մրցույթ	17157	8578	17157	9653,4	02.03.01	02.03.01	20.04.01	1,16
10	«Հրազդանի ուղեուղ» ավ. տրանսպորտային» ՊՓԲԸ	Կոտայքի մարզ, Բ. Հրազդան, Վանասուր թաղ. 1	ուղեուղների փոխադրում	մրցույթ	89286	22322	89286	4492,4	02.03.01	02.03.01	20.04.01	3
11	«Անահիտ» ՓԲԸ	Բ. Երևան, Խահակյան 28	հրահանգային արտադրություն	մրցույթ	16168	12126	16168	1296	02.03.01	02.03.01	27.04.01	-
12	«Իմոլուս» ԲԲԸ	Տավուշի մարզ, Բ. Դիլիջան Շահումյան 17ա	կապի սարքավորումների արտադրություն	մրցույթ	180842	45210	180842	762386	29.03.01	29.03.01	04.05.01	5,2
13	«Դիլիջանի արտադրական ջրերի մաքրման կայան» ԲԲԸ	Տավուշի մարզ, Բ. Դիլիջան Շահումյան 17ա	արտադրական կենցաղային մաքրում	մրցույթ	60732	30366	60732	չունի	29.03.01	29.03.01	04.05.01	0,33
14	«Դիլիջանի առողջարարական համալիր» ԲԲԸ	Տավուշի մարզ, Բ. Դիլիջան Պարզ լճի փ. 14	կուլտ. առողջարարական աշխատանքներ	մրցույթ	18700	4675	18700	չունի	29.03.01	29.03.01	01.05.01	2
15	«Նյութատեխնիկական մասնավորաձեռնության արտադրական» ՊՓԲԸ	Երևան, Թրիխյան խճ. 37	մեքենայի իրերի արտադրություն	մրցույթ	88996	22449	88996	16503	29.03.01	29.03.01	11.05.01	0,7
16	«Տաշիրի ԲՈՒԲՍ» ՊՓԲԸ	Տավուշի մարզ, Բ. Տաշիր Կիրովի փողոց	ուղեուղների և բեռների տեղափոխում	մրցույթ	53903	26951	53903	2873	29.03.01	29.03.01	11.05.01	3
17	«Իջևանի շինարարական» ՓԲԸ-ի հիմնական միջոցները	Տավուշի մարզ, Ազատական ավան	չինականություն	մրցույթ	57884	14471	-	չունի	29.03.01	29.03.01	15.05.01	4
18	«Բերդ հյուրանոց» ՊՓԲԸ-ի գույքը	Տավուշի մարզ, Բ. Բերդ Լեւոն Բեկի 1	հյուրանոցային ծառայություն	մրցույթ	31483,8	4900	-	չունի	29.03.01	29.03.01	15.05.01	0,05
19	«Մոմակի մանկական սոց. մատուցողական թուղթի կենտրոն» ՊՓԲԸ	Մոմակի մարզ, Բ. Մոմակի, Մայրաք. Երվան 23	սոց. մատուցողական ծառայություն	մրցույթ	774	194	774	841	29.03.01	29.03.01	22.05.01	չունի
20	«Վաղարշապատի սոց. մատուցողական թուղթի կենտրոն» ՊՓԲԸ	Բ. Էջմիածին, Արաբկյան 20 ա	սոց. մատուցողական ծառայություն	մրցույթ	3907	977	3907	4001	29.03.01	29.03.01	22.05.01	չունի
21	«Վայոց Չոր» ՓԲԸ	Վայոց Չորի մարզ, Բ. Եղեգնաձոր, Սիկոյան 16	չինականություն	մրցույթ	27634	6910	27634	32819	29.03.01	29.03.01	25.05.01	116
22	«Այգ» ՓԲԸ	Բ. Երևան, Նուբարաբեկի խճուղի	տրանսպորտի արտադրություն	մրցույթ	76528	38264	76528	3100	29.03.01	29.03.01	25.05.01	4,2
23	«Հ. Գաբրիելյանի անվ. Բյուրակների մանկական առողջարան» ՊՓԲԸ	Մրգածոսի մարզ, գ. Բյուրակ	առողջարանային գործունեություն	մրցույթ	15279	11460	15279	12977	29.03.01	29.03.01	29.05.01	5
24	«Անահիտ հանգստյան տուն» ՊՓԲԸ	Լոռու մարզ, Բ. Սեփանավան, Անտառային 1	հասարակական հանգստի կազմակերպություն	մրցույթ	65360	32680	65360	657	29.03.01	29.03.01	29.05.01	4
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ												
25	«Աղաթախի ԲՈՒԲՍ» ՊՓԲԸ	Մրգածոսի մարզ, Բ. Աղաթախ, Գալի փ. 1	բեռնաուղեուղային փոխադրում	ԲՈՒԲ	38181	50% ից ավելի	38181	13279	-	-	-	0,77
26	«Սեփանավանի ԲՈՒԲՍ» ՊՓԲԸ	Լոռու մարզ, Բ. Սեփանավան, Բաղրամյան 145	բեռնաուղեուղային փոխադրում	ԲՈՒԲ	62735	50% ից ավելի	62735	1644	-	-	-	1,7
27	«Ջերմուկի ԲՈՒԲՍ» ՊՓԲԸ	Վայոց Չորի մարզ, Բ. Ջերմուկ	բեռնաուղեուղային փոխադրում	ԲՈՒԲ	62046	25% ից ավելի	62046	4730	-	-	-	2,4
28	«Արթիկի ԲՈՒԲՍ» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, Բ. Արթիկ, Գործարանային 2	բեռնաուղեուղային փոխադրում	ԲՈՒԲ	99288	25% ից ավելի	99288	3578	-	-	-	3,1
29	«Աղանձու» ՊՓԲԸ	Սյունիքի մարզ, գյուղ Տաթև	էլեկտր. սարքավորություն	ԲՈՒԲ	5654	25% ից ավելի	5654	179	-	-	-	0,2355
30	«Արև» ՓԲԸ	Մրգածոսի մարզ, Բ. Աղաթախ, Գալի 20	էլ. սարքավորություն	ԲՈՒԲ	39251	25% ի չափով	39251	23073	-	-	-	3,85
31	«Արվարձանի ԲՈՒԲՍ» ՊՓԲԸ	Կոտայքի մարզ, գ. Մայակովսկի	բեռնաուղեուղային փոխադրում	ԲՈՒԲ	109616	50% ի չափով	109616	29062	-	-	-	2,8
32	«Երևանի թ. 3 բեռնատրանսպորտային» ՊՓԲԸ	Բ. Երևան, Արցախյան 34	բեռնափոխադրում	ԲՈՒԲ	23530	50% ի չափով	23530	582	-	-	-	1,997
33	«Հայկառույթ» ՊՓ, թիվ 11 խճուղի ԱՇՕ	Բ. Երևան, Աճառյան փողոց	չի ծավալում	ուղղակի վաճառք	1200	-	-	չունի	-	-	-	0,22



**Մասնավորեցման
Ծրագիր
Հայաստանի
Հանրապետությունում**

**Privatization Project
In the
Republic of Armenia**

Հարավումներ, ԲՈՒԲ-բաժնետոմսերի ազատ քաղաքացիություն, ԲՈՒԲ-բեռնաուղեուղային տրանսպորտային, ԱՇՕ-անվարձ շինարարության օբյեկտներ, Ազատ քաղաքացիությունը և մրցույթով մասնավորեցմանը մասնակցելու համար խնդրում ենք դիմել ՀՀ ղեկավարման նախարարության առևտրի կենտրոններ հետևյալ հասցեներով Բ. Երևան, Մայրաք. Երվան 8, Մաշտոցի 42ա, հեռ. 58 79 83, 56 02 64, 52 15 60:

Մրցույթի տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ ղեկավարման նախարարության մասնավորեցման գլխավոր վարչություն, Երևան, Կառավարական տուն 2, հեռ. 56 29 33, 52 37 15, 56 33 42, ինտերնետային էջ <http://www.privatization.am>, tender@arminco.com:

Հայաստանի Հանրապետության նախարարության նախագահի կողմից հաստատված «ժամանակ» օրաթերթի հասցեով թողարկված: Նախարարությունը ողջունում է մասնավորեցման հետ կապված Հայաստանի տնտեսության մեջ ներդրումային յուրաքանչյուր առաջարկ և ղեկավարում է այն մեծարկելու և արագորեն իրականացնելու հետ:

